

Շատ մը խնդիրներ կան, որ անասուններու մէջ լուծուած են եւ մարդերու մէջ դեռ վիճաբանութեան տակ են:

Լեզուի խնդիրը, օրինակի համար:

Չպիտի քննեմ, թէ ոչխարը գրաբա՛ր կը խօսի թէ աշխարհաբար, թէ գաւառաբարբառներ ունի՛ թէ ոչ, թէ ոչխարի լեզուն Հնդկ - եւրոպական է թէ ո՛չ. ասոնք քննելու բնաւ պէտք չունիմ. վասն զի Բաղիշի մէջ ծնած ոչխարին լեզուն շատ աղէկ կը հասկանայ այն ոչխար, որու հայրենիքն է Սպանիան. մինչդեռ Սշեցիի մը հայերէնը չհասկնար Պօլսոյ հայն, որու լեզուն չհասկնար Վանեցի հայն, որու լեզուն չհասկնար եւ այլն եւ այլն եւ այլն:

Այս խառնաշփոթ լեզուներուն վրայ աւելցո՛ւր նաեւ այն հայերէն լեզուներն, որք ամեն օր կշինուին եւ ամեն օր կկործանուին՝ այն ատեն դու ալ ինձի պէս երջանիկ պիտի գտնես գրականութիւնն անասուններու, որոց իւրաքանչիւր տեսակն իւր տեսակին լեզուն կը հասկնայ:

Այս տողերուն պատճառ տուաւ այն առիթն, զոր այսօր ունեցայ Վանայ գիւղերէն նոր եկած ճամբորդի մը հետ տեսնուելու: Սովու վրայ տեղեկութիւն հարցուցի իրեն, եւ ան ալ պատասխանեց ինձի շատ մը բառերով, որոնց եւ ոչ մին հասկցայ, բացի *մաշլախ* բառէն...

5 Յուլիս

Առատ - առատ *նօթաներ*, բայց *մուզիքային* ձայնը չլսուեցաւ դեռ...: Դեսպաններն ամեն օր *նօթաներ* կը խմբագրեն եւ Բ. Դրան կը դրկեն. Բ. պատուհանէն ալ այդ *նօթաներուն նօթաներով* կը պատասխանուի:

Բ. Դուռն այսօր դեսպաններուն *նօթա* մ'ալ դրկեց, որով կը ծանուցանէ, թէ անհնարին է իրեն Տուլչինիօն Քարատաղի յանձնել:

Վեց տէրութիւնները կը ստիպեն զմեզ, որ բոլոր սահմանակից տէրութիւններուն կամ իշխանութիւններուն մէյմէկ կտոր երկիր տանք: «Տուէք այդ երկիրներն որ, կ'ըսեն, Թուրքիոյ ամբողջութիւնը պահպանենք... ձեզի համար մեծ բարիք է, որ այդ երկիրները ձեռքէ հանէք... Բերլինի դաշնադրութեան առջեւ մոմ վառելու էք, որ ձեր իրաւունքներն հզօրապէս պաշտպանեց»:

Կեցցե՛ն պաշտպանք Թուրքիոյ...:

**

Դեսպաններն այսօր նոր ժողովք ըրին հայկական խնդրոյն համար: